

**ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի**

ք. Երևան

04.10.2016թ.

Ժամը 17:00

**Մասնակցում էին՝**

**Հասարակական խորհրդի անդամներ**

Ա. Մինասյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար /խորհրդի նախագահ/
Խ. Հակոբյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ
Վ. Հակոբյան	«Դեմետրա-էկո» բնապահպանական գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ,
Լ. Թասալյան	«Գիտակցիր իրավունքդ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն,
Գ. Օգանեզովա	«Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ նախագահ
Կ. Դանիելյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ նախագահ
Ա. Համբարձումյան	«Խազեր» էկոլոգոմշակության ՀԿ նախագահ
Ժ. Գալյան	«Հայկական էկոտուրիստական ասոցիացիա» ՀԿ
Ռ.Խաչատրյան	«Վայրի բնության և մշակության արժեքների պահպանության հիմնադրամ»
Ա. Իսկոյան	«Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Գ. Նանյան	«Քայլ» ՀԿ
Ա. Հակոբջանյան	«Հայաստանի համայնքների միություն»
Է. Գրիգորյան	«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» ՀԿ
Ա. Վարդանյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

**Հրավիրված էին՝**

Հ. Սանասարյան	«Հայաստանի կանաչների միություն» ՀԿ
Հ. Սարգսյան	«Տապան» էկո-ակումբ
Ե. Մանվելյան	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
Ս. Ադամյան	«Թռչնասերների կենտրոն» ՀԿ
Գ. Գաբրիելյան	«Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ
Բ. Հարությունյան	«Հասարակական ձայն»/ Civil Voice/ ՀԿ
Ա. Համբարձումյան	«Հասարակական ձայն»/ Civil Voice/ ՀԿ
Ա. Գրիգորյան	«Էկոլոգիական իրավունք» բնապահպանական ՀԿ
Հ. Տիգրանյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»

ՀՀ բնապահպանության նախարարություն

Ս. Պապյան	ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
Հ. Գալստյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության պետ
Խ. Խաչատրյան	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ

## Օրակարգում

### Հարց 1.

**Հայաստանի Հանրապետության բնապահպանական ոլորտի առկա խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները: Բնապահպանական խնդիրների լուծման նպատակով պետություն-քաղաքացիական հասարակություն փոխգործակցության ընդլայնումը:**

**Մտքերի փոխանակում:**

### Հարց.2

**<<Գործընկերություն հանուն բաց հասարակության>> նախաձեռնության կողմից 2017-2019թթ. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 18-րդ <<Առողջ և ապահով միջավայրում ապրելու իրավունք >> գլխի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկում:**

**Ձեկուցող ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Խաչիկ Խաչատրյան**

3. Այլ հարցեր

### Հարց 1.

**Հայաստանի Հանրապետության բնապահպանական ոլորտի առկա խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվող միջոցները: Բնապահպանական խնդիրների լուծման նպատակով պետություն-քաղաքացիական հասարակություն փոխգործակցության ընդլայնումը:**

### **Ելույթով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արծվիկ Մինասյանը**

Ողջունելով ներկաներին և շնորհակալություն հայտնելով հրավերին արձագանքելու համար՝ Խորհրդի նախագահը շեշտեց, որ ակնկալում է սերտ համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ: Այդ նպատակով հետագայում էլ նման հաղիպումներ հաճախ են կազմակերպվելու՝ ակնկալելով դրանցից ստանալ առավելագույն արդյունքներ:

Ըստ նախարարի, Կայուն զարգացումը և հաջողված տնտեսական կարգը հենց այն է, որը պարտադիր հաշվի է առնում և հենվում բնապահպանական լավագույն լուծումների վրա: Աշխարհի փորձն է դա փաստում: Հետևաբար առաջնահերթություն դիտարկելով բնապահպանական նորմերի պահպանման տնտեսական կարգի ձևավորումը, ես վստահ եմ, որ մենք նաև սահմանադրական նորմին համապատասխան կունենանք այդպիսի ձևավորված կարգ: Նկատելով, որ Հայաստանի տնտեսական քաղաքականության մեջ էական տեղ է հատկացված տուրիզմին՝ Արծվիկ Մինասյանն այս առումով կարևորել է էկոտուրիզմի ոլորտի զարգացումը, որը հենվում է պաշտպանված բնության վրա: Որպես օրինակ հիշատակեց Շաքիի ջրվեժի խնդիրը՝ նշելով, որ եթե հաշվարկվեին և համադրվեին էկոտուրիզմից ստացվող եկամուտը և ՓՀԷԿ-ից ստացվող եկամտի հետ, ապա ավելի նախընտրելի կլինեք առաջինը: Իր խոսքում բնապահպանության նախարարը կարևորել է բնապահպանական վերահսկողության համակարգի ուժեղացումը և կոչ արել հասարակական կազմակերպություններին գտնել խնդրի համատեղ լուծումներ, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների հետ մշակել այնպիսի վերահսկողական մեխանիզմ, որի մի զգալի հատվածում կներգրավվի հասարակությունը՝ համապատասխան խրախուսման մեխանիզմների կիրառմամբ: Վերահսկողական համակարգի ուժեղացման համար կարևորվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ներմուծումը, որը թույլ կտա նաև օպերատիվ արձագանքել համակարգի կողմից արձանագրված խախտումներին: Այս խնդիրների լուծման համար, ըստ Արծվիկ Մինասյանի, առաջնային է բնապահպանական ռազմավարության մշակումը, որում պետք է ամրագրված լինի բոլոր կողմերի դերակատարությունը և մասնակցությունը:

### **Ելույթով հանդես եկավ Հակոբ Սանասարյանը**

Ներկայացրեց «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի ոսկու հանքավայրի վերաբերյալ դիտարկումներ՝ փաստելով, որ տնտեսապես շահավետ չէ հանքի շահագործումը: Շեշտվեց, որ այն բնապահպանական լուրջ վտանգներ է պարունակում, ինչը ճիշտ չի գնահատված բնապահպանական փորձաքննության գործընթացում: Հարց բարձրացրեց բնապահպանական նոր փորձաքննություն անցկացնելու վերաբերյալ:

### **Առաջարկով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Առաջարկեց վերոհիշյալ Բնապահպանական փորձաքննական եզրակացության վերաբերյալ կազմակերպել քննարկում, որի ժամանակ կդիտարկվեն բոլոր մտահոգությունները և առաջարկները:

### **Ելույթով հանդես եկավ Աղասի Հակոբջանյանը**

Ներկայացրեց Շաքիի ջրվեժին հարակից «Հակոբջանյան և Գալստյան» ՍՊԸ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն: Նշեց, որ ինքն է սեփականաշնորհել ՓՀԷԿ-ը 19 տարի առաջ: Այդ տարիների ընթացքում փոփոխությունների են ենթարկվել բնապահպանական պահանջները և ընկերությանը տրված ջրի օգտագործման թույլտվությամբ նախատեսված ջրի ծավալ գետում չկա ու այս խնդիրը լուծման կարիք ունի: Նշեց, որ ընկերությունն ունի խնդրի լուծման ուղղությամբ առաջարկներ, եթե կազմակերպվի առանձին քննարկում, ապա կներկայացվեն այդ առաջարկները:

### **Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Տեղեկացրեց, որ համաձայնություն է ձեռք բերվել կառավարությունից և առաջիկայում Բնապահպանական պետական տեսչությունը ստուգումներ կիրականացնի Շաքիի ջրվեժի հարակից ՓՀԷԿ-ում և ձկնաբուծական տնտեսությունում: Ստուգումների արդյունքներն ամփոփելուց հետո հասարակական խորհրդում քննարկում կկազմակերպվի, որտեղ Աղասի Հակոբջանյանը կներկայացնի իր առաջարկները, ինչի արդյունքում Հասարակական խորհուրդը կտա իր եզրակացությունը: Բնապահպանության նախարարը տեղեկացրեց, որ ՓՀԷԿ-երի մասով ուժեղացվելու է վերահսկողությունը և ներկաներին առաջարկեց առաջարկություններ ներկայացնել:

### **Ելույթով հանդես եկավ Գալուստ Նանյանը**

Անդրադարձավ Հայաստանի բնության հուշարձանների խնդրին՝ նշելով, որ ցանկում ընդգրկված են 232 հուշարձան, որից միայն 29 են ստացել անձնագիր: Առաջարկեց արագացնել անձնագրավորման գործընթացը և հնարավորության դեպքում առաջարկել կառավարությանը ՀՀ բնապահպանության նախարարությանն ազատել անձնագրավորման համար նախատեսված վճարներից: Անձնագրավորումը կնպաստի նաև էկոտուրիզմի զարգացմանը:

### **Հանձնարարականով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Հանձնարարեց բարձրացված հարցը ներառել ՀՀ կառավարության ծրագրի իրականացման ուղղությունների միջոցառումներում:

### **Ելույթով հանդես եկավ Բաբկեն Հարությունյանը**

Շնորհավորեց Արծվիկ Մինասյանին ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ և մաղթեց արդյունավետ աշխատանք: Անդրադառնալով ՀՀ բնապահպանության նախարարություն-հասարակական կազմակերպություն համագործակցությանը կոչ արեց հասարակական կազմակերպությունների կողմից նախարարությանն ուղղված նամակները և առաջարկները վերցնել իր անմիջական վերահսկողության ներքո: Առաջարկեց նաև, որ յուրաքանչյուր հանդիպումից հետո հրապարակվի արձանագրությունը և

հանդիպման ժամանակ բարձրացված հարցերի ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Առաջարկեց Շաքիի ջրվեժի հարակից տնտեսավարող սուբյեկտներում նախատեսվող ուսումնասիրությունների գործընթացին ներգրավել նաև «Հասարակական ծայն» ՀԿ- փորձագետներին:

**Պատասխանով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը:**

Ընդունեց առաջարկությունը և պատրաստակամություն հայտնեց ներգրավել հասարակական կազմակերպությունների կողմից առաջարկվող փորձագետներին, նաև վերահսկողության հարցում

**Ելույթով հանդես եկավ Արթուր Գրիգորյանը**

Անդրադարձավ Ամուլսարի ոսկու հանքավայրի խնդրին և ներկայացրեց, որ փորձաքննության որոշումը վիճարկել են դատարանում, սակայն դատարանը գտել է, որ այն իրավական ակտ չէ, հետևաբար այն չի կարող քննել: Հայտնեց նաև, որ այդ հարցը ներկայում հանձնվել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեին: Նշեց, որ խնդիրը որակյալ փորձաքննության անցկացումն է, քանի որ մեկ կամ երկու փորձագետը չի կարող տիրապետել գնահատման ենթակա բոլոր ոլորտներին, կա նաև տեխնիկական հագեցվածության խնդիր: Անդրադարձ կատարվեց նաև Թեղուտի հանքավայրում տեսչական ստուգում իրականացնելու խնդրին՝ հիշատակելով, որ կառավարության որոշմամբ դադարեցվել էր արդեն սկսված ստուգումները: Առաջարկեց Թեղուտում անցկացնել տեսչական ստուգումներ և լուծել փորձաքննության ընթացքում էկոհամակարգային գնահատման հարցը: Որպես սկզբունքային հարց մատնանշեց՝ պոչամբարների նախագծային ծավալների և ներկայիս լցվածության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության բացակայությունը:

**Պարզաբանմամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Փորձագիտական եզրակացությունը վարչական ակտ համարելու հարցի վերաբերյալ կա օրենսդրական խնդիր և օրենսդրական հարթությունում այն ենթակա է քննարկման: Հանքարդյունաբերության մասով կա լիազորությունների սահմանափակում, լիարժեք փորձագիտական գնահատական տալու համար անհրաժեշտ է որոշակի լիազորություններ նաև ընդերքի պաշարների հարցում: Ընդունեց, որ կա փորձագիտության ոլորտում կարողությունների ուժեղացման խնդիր, ինչի ուղղությամբ դիմելու են միջազգային դոնոր կազմակերպություններին և կոչ արեց նաև հասարակական կազմակերպություններին աջակցելու այդ խնդրում:

**Ելույթով հանդես եկավ Կարինե Դանիելյանը**

Նկատեց, որ Հայաստանում առաջնային ոլորտներ են համարվել տեղեկատվական տեխնոլոգիաները, հանքարդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տուրիզմը, սակայն խնդիրն այն է, որ դրանք գտնվում են հակասության մեջ: Հանքարդյունաբերությունը խոչընդոտում է տուրիզմի և գյուղատնտեսության զարգացմանը: Այդ հակասության վերացմանը խանգարում են կոռուպցիոն երևույթները, ինչպես նաև այն, որ Հայաստանը հումքային կցորդի է վերածվել: Առաջարկեց կայուն զարգացման ուղղությամբ մշակված առաջարկությունները, որոնք ամփոփված են 17 նպատակների մեջ և որից 9-ը բնապահպանական են, ընդգրկել կառավարության ծրագրում:

## **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Առաջարկեց բանաձևման տեսքով ներկայացնել բարձրացված խնդիրը, որպեսզի այն ներկայացվի ՀՀ կառավարության ծրագրում ընդգրկելու համար:

## **Ելույթով հանդես եկավ Գոհար Օզանեզովան**

Բարձրացրեց կենսաբազմազանության խնդիրը՝ նկատելով, որ հատուկ պահպանվող տարածքներում վիճակը համեմատաբար բարվոք է, սակայն պետք է այնպես կազմակերպել էկոտուրիզմը, որ չվնասեն կենսաբազմազանությունը: Բարձրացրել է նաև Հայաստանի անտառների պահպանության խնդիրները և առաջարկեց այն դարձնել թիրախային հարց:

## **Պարզաբանմամբ հանդես եկավ Խաչիկ Հակոբյանը**

Հայտնեց, որ ՀՀ կառավարության առաջիկա նիստի օրակարգում ընդգրկված է էկոտուրիզմի ոլորտը կարգավորող որոշման նախագիծ: Էկոտուրիզմի կենտրոնն արդեն գործում է Հայաստանի բնության պետական թանգարանում: Կենտրոնի նպատակն է մեկ կետից համակարգել բնության համապատասխան տարածքներում էկոտուրիստական ծառայության մատուցման գործընթացը: Տեղեկացվեց, որ Երևանի բուսաբանական այգում նույնպես նախատեսվում է նման կենտրոնի ստեղծումը, և այդ հարցը կդրվի քննարկման:

## **Ելույթով Հանդես եկավ Գալուստ Նանյանը**

Նկատելով, որ ներկա պահին էկոտուրիզմի կենտրոնը տեղակայված է Հայաստանի բնության պետական թանգարանի ճեմասրահում՝ ցանկություն հայտնեց, որ էկոտուրիզմի կենտրոնի տարածքն ընդլայնվի, քանի որ այցելուների համար մի փոքր նեղվածություն է առաջացնում:

## **Պարզաբանմամբ հանդես եկավ Խաչիկ Հակոբյանը**

Նշեց, որ ներկայում քննարկվում է Հայաստանի բնության պետական թանգարանի տարածքների ընդլայնման հարցը, իսկ էկոտուրիզմի կենտրոնի աշխատանքներին մեծապես նպաստում է թանգարանում առկա բնության հատուկ պահպանվող տարածքների էքսպոզիցիաները:

## **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Առաջարկեց էկոտուրիզմի կենտրոնի մասին մոտեցումը ներկայացնել գրավոր:

## **Ելույթով հանդես եկավ Արթուր Համբարձումյանը**

Ներկայացրեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում փոփոխությունների առաջարկ է մշակվել և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարություն, սակայն ընթացք չի տրվել: Պատրաստակամություն հայտնեց աշխատել նախարարության հետ խնդիրների լուծման համար: Առաջարկեց վեր հանել այդ նախագիծը և կազմակերպել քննարկում նախագծի վերաբերյալ:

## **Պարզաբանմամբ հանդես եկավ Արմեն Վարդանյանը**

Նշեց, որ ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացված նախագիծը քննարկվել է և ներկայացրած կազմակերպությանը տեղեկացվել է, որ ներկայում

ընթանում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում փոփոխություններ կատարելու աշխատանքներ, որի շրջանակներում հաշվի կառնվեն նաև վերոհիշյալ նախագծում բարձրացված առաջարկները:

### **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Հանձնարարեց, որ նախագիծը բաժանվի հասարակական խորհրդի անդամներին և ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումներին և այն քննարկվի հասարակական խորհրդի առաջիկա նիստում, որ տեղի կունենա մոտ ժամանակներում: Հայտնեց, որ հակված է նախագծերը քննարկել հասարակական խորհրդում, որտեղ ոլորտի մասնագետներ են հավաքված, այնուհետև այն կներկայացվի հանրության քննարկմանը:

### **Ելույթով հանդես եկավ Հրանտ Սարգսյանը**

Բարձրացրեց ՀՀ բնապահպանության նախարարությունում էկոլոգ-տնտեսագետների կարողությունների օգտագործման խնդիրը: Բանախոսը բարձրացրեց նաև էկոկրթության կարևորության հարցը: Նշեց, որ մի շարք կազմակերպությունների, այդ թվում նաև ՀՀ բնապահպանության նախարարության ներգրավմամբ ստեղծվել է բնապահպանական կրթության ցանց, որտեղ ուսումնասիրվել են Հանրապետությունում էկոկրթության ներկա վիճակը և միջազգային փորձը: Կարևորեց էկոկրթությունը սերնդի դաստիարակության գործում: Առաջարկեց Բնապահպանական կրթական ցանցի անդամների մասնակցությամբ մեկ քննարկում էլ էկոկրթության խնդրով անցկացնել: Բարձրացվեց նաև Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին օրենքի ճակատագիրը: Առաջարկեց խթանել վերոնշյալ օրենքի ընդունումը:

### **Առաջարկով հանդես եկավ Աղասի Հակոբջանյանը**

Առաջարկեց գրավոր ներկայացնենք հարցերը նախարարությանը և կազմակերպել գործնական քննարկում:

### **Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Նշեց, որ հրավիրված հանդիպման նպատակը ոլորտում երկար տարիներ գործունեություն ծավալող մասնագետներին լսելն է: Տեղեկացրեց նաև, որ հաջորդ նիստը կլինի մոտակա ժամանակահատվածում, որտեղ կներկայացվի նաև հաշվետվություն, թե այս նիստի ժամանակ բարձրացված հարցերի ուղղությամբ ինչ է կատարվել:

### **Առաջարկներով հանդես եկավ Էրիկ Գրիգորյանը**

Նշեց, որ Հայաստանում ջրի պահանջարկ-առաջարկի հստակ թվեր չկան, բոլորը հաշվարկային են: Կարծիք հայտնեց, որ բնապահպանական օրենսդրական շրջանակը չի նպաստում շրջակա միջավայրի աղտոտման նվազեցմանը: Այդ համատեքստում, հիշատակվեց նաև բնօգտագործման ցածր վճարները: Առաջարկեց մշակել խնդրի կարգավորման տնտեսական մեխանիզմներ:

### **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Է. Գրիգորյանին առաջարկեց ներկայացնել հստակ գրավոր առաջարկներ:

### **Առաջարկությամբ հանդես եկավ Հակոբ Սանասարյանը**

Առաջարկեց, որ հասարակական կազմակերպությունների կողմից նախարարությանն ուղղված՝ երկրի ճակատագրին առնչվող և շատ կարևոր գրավոր դիմումներին տրված պատասխանի տակ լինի նախարարի ստորագրությունը:

### **Հարց.2**

**<<Գործընկերություն հանուն բաց հասարակության>> նախաձեռնության կողմից 2017-2019թթ. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 18-րդ <<Առողջ և ապահով միջավայրում ապրելու իրավունք >> գլխի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների քննարկում:**

### **Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Ներկաներին առաջարկեց «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության կողմից 2017-2019թթ. մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 18-րդ «Առողջ և ապահով միջավայրում ապրելու իրավունք» գլխի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ և հարցը քննարկել առաջիկա հասարակական խորհրդի նիստում:

### **Ելույթով հանդես եկավ Ռուբեն Խաչատրյանը**

Առաջարկեց ներգրավել միջազգային դոնոր կազմակերպությունների հնարավորությունները՝ մասնավորապես ՓՀԷԿ-երի խնդրի լուծման նպատակով: Բարձրացրեց էկոլոգիական խնդիրների անդրսահմանային ազդեցության խնդիրը և առաջարկեց ուշադրության կենտրոնում պահել հարցը, քանի որ գտնվում ենք բարդ տարածաշրջանում և այն յուրաքանչյուր առիթով կարող է տարածաշրջանի երկրների կողմից շահարկվել միջազգային հանդիպումների ժամանակ: Առաջարկեց նաև բնապահպանական կրթության ոլորտում ներգրավել թե՛ հասարակական, թե՛ միջազգային կազմակերպությունների ռեսուրսները: Բարձրացրեց նաև վայրի կենդանիների անազատ և կիսաազատ պայմաններում պահելու և դրանց առևտրի խնդիրներին վերաբերող հարցեր: Հայտնեց, որ այդ և նման այլ հարցերի վերաբերյալ առաջարկությունները կներկայացնի գրավոր՝ մեկ փաթեթով:

### **Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Հայտարարեց, որ բարձրացված հարցը շատ կարևոր է և պետք է դրան տրվի ինստիտուցիոնալ լուծումներ:

### **Ելույթով հանդես եկավ Ինգա Զարաֆյանը**

Ներկայացրեց էկոլոգիա հասարակական կազմակերպության գործունեությունը և ՀՀ բնապահպանության նախարարության փորձագիտական խմբի իր ղեկավարած հասարակական կազմակերպության համատեղ իրականացրած ծրագիրը, որի



շրջանակներում ուսումնասիրվել է 87 փոքր ՀԷԿ՝ մշակվել է մեթոդաբանություն, 75 չափանիշներով ուսումնասիրություններ են կատարվել:

### **Ելույթով հանդես եկավ Ամայա Համբարձումյանը**

Ներկայացրեց իր ղեկավարած կազմակերպության կողմից իրականացվող էկոկրթական ծրագրերը: Անդրադարձ կատարվեց նաև Կլիմայի փոփոխության մեղմման ուղղությամբ միջոցառումների իրականացմանը:

### **Ելույթով հանդես եկավ Լուսինե Թասալյանը**

Բարձրացրել է իր մտահոգությունը Արփա գետի վիճակի վերաբերյալ, ունի ուսումնասիրությունների արդյունքներ, որոնք կուղարկի նախարարությանը և խնդրեց, որ հարցն ուսումնասիրվի:

### **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Առաջարկեց ուսումնասիրության արդյունքները ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ քննարկելու նպատակով:

### **Ելույթով հանդես եկավ Աիդա Իսկոյանը**

Անդրադարձավ Օրհուսի կոնվենցիայով պետության ստանձնած պարտականություններին, մասնավորապես բնապահպանական խնդիրների լուծմանը հասարակության մասնակցության հարցում և առաջարկեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի էկոիրավունքի կենտրոնում կազմակերպել քննարկումներ՝ ներգրավելով փորձագետների, նաև կազմակերպել հանրային լսումներ:

### **Ելույթով հանդես եկավ Վահագն Հակոբյանը**

Ներկայացրեց, որ իր կազմակերպության կողմից կատարվել են ուսումնասիրություններ և պարզվել, որ Մասիսի շրջանում ինտենսիվ ընթանում է անապատացման պրոցես, նույնիսկ վարելահողերում են տարածվում անապատային բույսերը և գյուղացիները լքում են այդ տարածքը:

### **Առաջարկությամբ հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Առաջարկեց ուսումնասիրության արդյունքները ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն: Այն կփոխանցվի համապատասխան ստորաբաժանմանը, քննարկելու նպատակով:

### **Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը**

Շնորհակալություն հայտնելով արդյունավետ և օգտակար քննարկումների համար՝ շեշտեց, որ այս հանդիպումով տրվել է համատեղ աշխատանքի մեկնարկը և հետագայում ոլորտին առնչվող որոշումները կկայացվեն հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, ինչն էապես կնպաստի դրանց իրագործման արդյունավետության բարձրացմանը:

-----  
**Առաջարկվեց**

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝

-մեկ օրվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ ՀՀ կառավարության ծրագրում ներառելու համար:

-ներկայացնել մեխանիզմների առաջարկություններ՝ բնապահպանական վերահսկողության գործընթացին հանրության մասնակցությունն ապահովելու նպատակով:

-խորհրդի նիստում իրենց կողմից բարձրացված բոլոր հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ առանձին քննարկումներ կազմակերպելու և համապատասխան ընթացք տալու համար:

### **Հանձնարարվեց**

#### **2. Խ. Հակոբյանին, Ա. Հովհաննիսյանին, Ա Հարությունյանին, Գ. Մանուչարյանին՝**

ՀՀ կառավարության ծրագրի իրականացման ուղղությունների միջոցառումներում ներառել բնության հուշարձանների անձնագրավորման գործընթացը:

#### **2. Հ. Գալստյանին, Ա. Վարդանյանին**

Շաքիի ջրվեժին հարակից տնտեսվարող սուբյեկտներում նախատեսվող ուսումնասիրությունների գործընթացին ներգրավել նաև «Հասարակական ծայն» ՀԿ-ն փորձագետներին

#### **3. Ա. Վարդանյանին, Խ. Խաչատրյանին, Վ. Սահակյանին՝**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում «Հասարակական ծայն» ՀԿ-ի ներկայացրած փոփոխությունների առաջարկը տրամադրել ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումներին ու Հասարակական խորհրդի անդամներին և երկշաբաթյա ժամկետում հրավիրել Հասարակական խորհրդի նիստ, որի օրակարգում ընդգրկել նաև այդ հարցը:

#### **4. Ա. Վարդանյանին, Վ. Սահակյանին, Վ. Ավետիսյանին՝**

կազմակերպել «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման համար տրված բնապահպանական փորձաքննության եզրակացության վերաբերյալ քննարկումներ:

ՀՀ բնապահպանության նախարարին կից  
հասարակական խորհրդի նախագահ

 Ա. Մինասյան

Արձանագրեց՝  
Ա. Վարդանյանը